առաջ՝ մահուան գիրկն է նետում։ Դա այն մեծ և խոր փոսերն են, որ իւրաքանչիւր տուն, իւրենց տնային գործածութեան համար, գետից ջուր է հոսեցնում այդ փոսերի մէջ առուակով։ Այդ ջրամբարների երեսները թէև խնամքով ծածկում են հաստ գերաններով և ապա հողով, որպէս զի թէ մաքուր մնայ ջուրը և թէ մարդ ու անասուն չընկնի նրանց մէջը, այսու ամենայնիւ, ամառնային ամիսներին, երբ գետերի ջրերը սկսում են ցամաքել և ընակչութիւնը դաշտային երկրագործական աշխատանքներով պարապել, ջրամբարների ջրերը սկսում են հոտել ու նեխել։ Հաստ գերաններով ծածկուած զանազան ծակ ու ծուկերում ոչ միայն գորտեր ու պէսպէս սողուններ են վխտում, այլ և շատ անգամ նոյն իսկ թունաւոր օձեր ու կրիաներ։ Ահա այդ է գլխաւոր պատճառներից մէկը, որ դաշտարնակ թէ ուտիախօս ու թրքախօս հայերի և թէ թուրքերի արական սեռը լինում է սովորաբար վտիտ, վատոյժ և թուլակազմ։ Իսկ ընդհակառակն՝ իգական սեռը, կարմրաթուշ, առողջ, պնդակազմ և վարդագոյն, չարքաշ, համբերատար և տնային աշխատութեանց մէջ չափազանց աշխատասէր։

Գ.

ՈՒՏԻԱՑՈՑ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ

Ուտիացի տղամարդկանց գլխաւոր պարապ-